

**ՄԻԶԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՄԵԶ. ՔԱՆԱԿԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԱԼԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
*liana.grigoryan@asue.am*

**ՎԱՀԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կիրառական ֆինանսներ ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
*vahemikayelyan.asue@gmail.com*

**ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կիրառական ֆինանսներ ֆակուլտետի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
*ani.grigoryan@asue.am | anigrigoryan176@gmail.com*

**ՏԻԳՐԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կիրառական ֆինանսներ ֆակուլտետի դեկանի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու  
*tigran-19@mail.ru*

**DOI: 10.54503/978-9939-481-23-4-408**

**Համառոտագիր**

Հետազոտության մեջ դիտարկվում են ֆինանսական ռիսկերի վարկանիշավորման միջգիտակարգային մոտեցումները՝ հիմնված քանակական ինտերվալային մեթոդների վրա: Որպես ուսումնասիրության օբյեկտ ընտրվել է խմիչքների արտադրության համաշխարհային առաջատար Diageo PLC ընկերություն:

Ռեգրեսիոն մոդելավորման միջոցով ախտորոշվել է մարժինալ ռիսկի հինգ գործակիցների ազդեցությունը կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) վրա:

Սույն աշխատանքի նպատակն է հիմնավորել քանակական ինտերվալային մեթոդների կիրառությունը ֆինանսական ռիսկերի վարկանիշավորման գործում: Մենք դիտարկում ենք մարժինալ ռիսկի գործակիցների ազդեցությունը WACC-ի վրա՝ զուգահեռներ անցկացնելով խմիչքների արտադրության կայուն մոդելների ոլորտում կիրառվող կապիտալի կառուցվածքի կանխատեսման մոդելների միջև:

Առաջարկվող միջգիտակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս

նվազեցնելու անորոշության գործոնը ներդրումային որոշումների կայացման մեջ և ստեղծելու հուսալի հիմքեր կորպորատիվ ֆինանսավորման գործակցի (CFR) օպտիմալացման համար:

Արդյունքները փաստում են, որ ինտերվալային մոտեցումը թույլ է տալիս առավել ճշգրիտ կանխատեսել կորպորատիվ կայունությունը և օպտիմալացնել ֆինանսավորման կառուցվածքը իրական հատվածի ձեռնարկություններում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ՝** ֆինանսական ռիսկեր, վարկանիշավորում, ինտերվալային մեթոդ, մարժինալ գործակիցներ, կապիտալի արժեք, Diageo

## **INTERDISCIPLINARY APPROACHES TO FINANCIAL RISK RATING: APPLYING QUANTITATIVE INTERVAL METHODS IN THE BEVERAGE INDUSTRY**

**LIANA GRIGORYAN**

Armenian State University of Economics  
Head of the Chair of Managerial Accounting and Auditing  
Doctor of Sciences (Economics), Professor  
*liana.grigoryan@asue.am*

**VAHE MIKAYELYAN**

Armenian State University of Economics  
Dean of the Faculty of Applied Finance  
PhD in Economics, Associate Professor  
*vahemikayelyan.asue@gmail.com*

**ANI GRIGORYAN**

Armenian State University of Economics  
Lecturer at the Faculty of Applied Finance  
PhD in Economics, Associate Professor  
*ani.grigoryan@asue.am | anigrigoryan176@gmail.com*

**TIGRAN MANUKYAN**

Armenian State University of Economics  
Deputy Dean of the Faculty of Applied Finance  
PhD in Economics  
*tigran-19@mail.ru*

### **Abstract**

The study examines interdisciplinary approaches to financial risk rating based on quantitative interval methods. The global beverage industry leader, Diageo PLC, has been selected as the object of the study. Through regression modelling, the impact of five marginal risk coefficients on the Weighted Average Cost of Capital (WACC) was diagnosed.

The purpose of this work is to substantiate the application of quantitative interval methods in the financial risk rating process. We analyse the influence of marginal risk coefficients on WACC by drawing parallels between capital structure forecasting models

used in the sustainable beverage manufacturing sector.

The proposed interdisciplinary approach enables the reduction of uncertainty factors in investment decision-making and establishes a reliable foundation for the optimisation of the Corporate Financing Ratio (CFR).

The results demonstrate that the interval-based approach enables more accurate predictions of corporate stability and the optimisation of financing structures in real-sector enterprises.

**Keywords and phrases:** Financial risks, rating, interval method, marginal coefficients, cost of capital, Diageo.

## **МЕЖДИСЦИПЛИНАРНЫЕ ПОДХОДЫ К РЕЙТИНГУ ФИНАНСОВЫХ РИСКОВ: ПРИМЕНЕНИЕ КОЛИЧЕСТВЕННЫХ ИНТЕРВАЛЬНЫХ МЕТОДОВ В СФЕРЕ ПРОИЗВОДСТВА НАПИТКОВ**

### **ЛИАНА ГРИГОРЯН**

Заведующая кафедрой управленческого учета и аудита  
Армянского государственного экономического университета,  
доктор экономических наук, профессор  
*liana.grigoryan@asue.am*

### **ВАГЕ МИКАЕЛЯН**

Декан факультета прикладных финансов Армянского  
государственного экономического университета  
кандидат экономических наук, доцент  
*vahemikayelyan.asue@gmail.com*

### **АНИ ГРИГОРЯН**

Преподаватель факультета прикладных финансов  
Армянского государственного экономического университета  
кандидат экономических наук, доцент  
*ani.grigoryan@asue.am | anigrigoryan176@gmail.com*

### **ТИГРАН МАНУКЯН**

Заместитель декана факультета прикладных финансов  
Армянского государственного экономического университета  
кандидат экономических наук  
*tigran-19@mail.ru*

### **Аннотация**

В исследовании рассматриваются междисциплинарные подходы к рейтингу финансовых рисков, основанные на количественных интервальных методах. В качестве объекта исследования была выбрана компания Diageo PLC – мировой лидер в производстве напитков.

С помощью регрессионного моделирования было диагностировано влияние пяти коэффициентов маржинального риска на средневзвешенную стоимость

капитала (WACC).

Целью данной работы является обоснование применения количественных интервальных методов в процессе рейтингования финансовых рисков. Мы рассматриваем влияние коэффициентов маржинального риска на WACC, проводя параллели между моделями прогнозирования структуры капитала, применяемыми в секторе устойчивых моделей производства напитков.

Предлагаемый междисциплинарный подход позволяет снизить фактор неопределенности при принятии инвестиционных решений и создать надежную базу для оптимизации коэффициента корпоративного финансирования (CFR).

Результаты подтверждают, что интервальный подход позволяет более точно прогнозировать корпоративную устойчивость и оптимизировать структуру финансирования предприятий реального сектора.

**Ключевые слова и фразы:** финансовые риски, рейтингование, интервальный метод, маржинальные коэффициенты, стоимость капитала, Diageo.

## **Ներածություն**

Ժամանակակից ֆինանսական շուկաների անկայունությունը և համակարգային ռիսկերի բարդացումը նոր պահանջներ են դնում կորպորատիվ կառավարման և ռիսկերի գնահատման մեթոդաբանության առջև: Ավանդական վարկանիշավորման համակարգերը հաճախ հիմնվում են ստատիկ և կետային ցուցանիշների վրա, որոնք ի գործու չեն լիարժեք արտացոլել շուկայական տատանողականությունը և մարժինալ ռիսկերի դինամիկան: Այս համատեքստում ֆինանսական ռիսկերի գնահատումը վերածվում է միջգիտակարգային հետազոտական տիրույթի, որտեղ հատնվում են մաթեմատիկական ինտերվալային վերլուծությունը, վիճակագրական մոդելավորումը և ոլորտային ֆինանսական մենեջմենթը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ խմիչքների արտադրության ոլորտի խոշորագույն ընկերությունների համար կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) [16, էջ 1056] օպտիմալացումը պահանջում է մարժինալ ռիսկերի առավել ճշգրիտ «չափայնացում»:

Ինչպես ցույց է տալիս Diageo PLC ընկերության փորձը, իրական հատվածում ֆինանսական կայունությունը կախված է ոչ միայն շահութաբերության բացարձակ մակարդակից, այլև դրա տատանողականության ինտերվալային վերահսկողությունից:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը կառուցված են ֆինանսական մաթեմատիկայի, վիճակագրական վերլուծության և կորպորատիվ ֆինանսների տեսության համադրության վրա: Հետազոտության ընթացքում ներկայացրել ենք քանակական ինտերվալային մեթոդի մաթեմատիկական ապարատը և դրա կիրառման տրամաբանությունը Diageo ընկերության ոլորտի տվյալների վրա:

## **Գրականության ակնարկ և տեսամեթոդաբանական հիմքեր**

Դիագետ ընկերությունը միջազգային սպիրտային խմիչքների շուկայի առաջատարներից է, որը ունի ավելի քան 200 ապրանքանիշ և գործունեություն

է ծավալում ավելի քան 180 երկրներում: Ընկերության պորտֆելում ընդգրկված են աշխարհում լայն ճանաչում ունեցող ապրանքանիշներ, ինչպիսիք են Johnnie Walker-ը, Smirnoff-ը, Baileys-ը, Tanqueray-ը, Captain Morgan-ը և Guinness-ը, ինչը ապահովում է շուկայի տարբեր հատվածներում կայուն մրցակցային դիրք **[4]**: Բացի այդ՝ շոտլանդական վիսկին կազմում է ընկերության վաճառքի զգալի մասը, ինչը կարևոր դեր ունի նրա եկամտային կառուցվածքում և գլոբալ գործունեության մեջ **[6, էջ 125]**:

Ֆինանսական ռիսկերի գնահատման և կապիտալի կառուցվածքի օպտիմալացման հիմնախնդիրները մշտապես գտնվում են ժամանակակից տնտեսագիտական հետազոտությունների կենտրոնում **[15, էջ 412]**: Վերջին տարիների գիտական հրապարակումները վկայում են այն մասին, որ ոլորտային առանձնահատկությունները վճռորոշ նշանակություն ունեն ռիսկերի վարկանիշավորման հուսալի մոդելների ձևավորման համար **[3]**:

Մասնավորապես, խմիչքների արտադրության ոլորտում կորպորատիվ ֆինանսավորման գործակցի (CFR) և կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) փոխկապվածությունը դիտարկվում է որպես ընկերության արժեքի բարձրացման հիմնական լծակ **[2, էջ 93 1152]**: Հայ հետազոտողներ Մաթևոսյանը և համահեղինակները **[13, էջ 117]** առաջարկում են մասնագիտացված մոտեցում ակոնոլային խմիչքների արտադրությամբ զբաղվող ընկերությունների համար՝ շեշտադրելով CFR-ի ազդեցությունը WACC-ի վրա՝ որպես ֆինանսական կայունության երաշխիքի:

Սյուս կողմից, տեխնոլոգիական ոլորտում, որտեղ գերիշխում են SaaS (Software as a Service) եկամտային մոդելները, վճարունակության գնահատումը պահանջում է դրամական հոսքերի վրա հիմնված առավել ճկուն մեթոդների կիրառում **[7, էջ 736]**: Սա փաստում է այն մասին, որ ավանդական մեթոդները պետք է համադրվեն ոլորտային եկամտային առանձնահատկությունների հետ **[12, էջ 480]**:

Ավտոմոբիլային արդյունաբերության օրինակով իրականացված հետազոտությունները ցույց են տալիս քանակական ինտերվալային մոտեցման առավելությունները ռիսկերի վարկանիշավորման գործում **[8, էջ 1634]**:

Արհեստական բանականության (AI) ներդրումը կապիտալի կառուցվածքի կանխատեսման գործընթացում թույլ է տալիս զգալիորեն բարձրացնել իրացվելիության և վճարունակության կառավարման ճշգրտությունը **[9, էջ 1715]**: Այս գիտական թեզը զարգացվում է նաև սմարթ տրանսպորտային համակարգերի և թվային տնտեսության համատեքստում, որտեղ CFR-ի և WACC-ի փոխազդեցությունը դիտարկվում է որպես ենթակառուցվածքային զարգացման կարևոր գործոն **[14]**:

Այսպիսով՝ գրականության վերլուծությունը հաստատում է միջգիտակարգային և քանակական ինտերվալային մեթոդների անհրաժեշտությունը տարբեր ոլորտների ֆինանսական անալիզի համար:

## **Մեթոդաբանություն**

Հետազոտության մեթոդաբանական հենքը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ կորպորատիվ ռիսկը «ստատիկ» մեծություն չէ, այլ՝ փոփոխականների դինամիկ համակարգ, որը լավագույնս նկարագրվում է ինտերվալային արժեքների միջոցով:

*1. Բանակական ինտերվալային մեթոդի մաթեմատիկական ձևակերպումը*

**[1, էջ 93]:** Ռիսկի գնահատման համար կիրառվում է ռիսկի գործակցի (Cr) հաշվարկը յուրաքանչյուր մարժինալ ցուցանիշի համար: Այն որոշվում է որպես տվյալների ստանդարտ շեղման (sigma) հարաբերություն դրանց միջին թվաբանականին ( $\mu$ ) դիտարկվող ժամանակահատվածի (2019–2024 թթ.) համար.

$$Cr = \sigma/\mu \quad (1)$$

Այս գործակիցը թույլ է տալիս ձևավորել ռիսկի ինտերվալներ, որոնք բնութագրում են ընկերության ֆինանսական կայունության տիրույթը: Diageo-ի նման կայուն արտադրական ընկերությունների համար այս ինտերվալները հակված են լինել նեղ, ինչը վկայում է ցածր անորոշության մասին:

2. *Մարժինալ ռիսկի գործակիցների համակարգը (Xi):* Մոդելավորման համար առանձնացվել են հինգ հիմնական մարժինալ փոփոխականներ, որոնք WACC-ի վրա ազդող հիմնական դրավերներն են.

- X1 (Gross Profit Margin Risk)– արտադրական արդյունավետության և հումքի գների տատանողականության ռիսկը:
- X2 (EBIT Margin Risk)– գործառնական շահութաբերության կայունությունը:
- X3 (EBITDA Margin Risk)– դրամական հոսքերի գեներացման կարողությունը (առանց անորոշագիտն ազդեցության):
- X4 (Pre-tax Profit Margin Risk)–ֆինանսական ծախսերի և CFR-ի (Corporate Financing Ratio) ազդեցությունը:
- X5 (Net Profit Margin Risk)– վերջնական շահութաբերության տատանողականությունը:

3. *WACC-ի օպտիմալացման մոդելը:* Կապիտալի միջին կշռված արժեքի (Y) և ռիսկի գործակիցների (Xi) միջև կապը նկարագրվում է բազմագործոն գծային ռեգրեսիոն հավասարմամբ.

$$Y(WACC) = \beta_0 + \beta_1X_1 + \beta_2X_2 + \beta_3X_3 + \beta_4X_4 + \beta_5X_5 + \epsilon \quad (2)$$

Այս մոդելը հնարավորություն է տալիս ակտորոշելու, թե որ մարժինալ ռիսկն է առավել զգալի ազդեցություն թողնում Diageo-ի կապիտալի արժեքի վրա:

Հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների համադրությամբ, ինչը թույլ է տվել համակողմանիորեն ակտորոշել ֆինանսական ռիսկերը Diageo ընկերության օրինակով:

- *Քանակական ինտերվալային վերլուծության մեթոդ* [10, էջ 1024]: Սա հետազոտության առանցքային մեթոդ է՝ հիմնված վիճակագրական տվյալների ինտերվալային մշակման վրա: Ի տարբերություն ստանդարտ վարկանիշավորման՝ այս մեթոդը դիտարկում է ոչ թե մեկուսի ցուցանիշներ, այլ դրանց տատանողականության միջակայքերը:
- *Կիրառումը:* Յուրաքանչյուր մարժինալ ցուցանիշի համար հաշվարկվել է տատանողականության գործակիցը, որը թույլ է տվել սահմանել ռիսկի «միջանցքները»:

- *Բազմագործոն նեգրեսիոն մոդելավորում:* Մաթեմատիկական այս մեթոդն օգտագործվել է կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) և մարժինալ ռիսկի գործակիցների (X1-X5) միջև պատճառահետևանքային կապերը բացահայտելու համար:
- Նպատակը. Որոշել, թե որ փոփոխականն ունի առավելագույն ազդեցություն Diageo-ի ֆինանսական կայունության վրա:
- *Դեպքի ուսումնասիրության մեթոդ:* Մեթոդաբանությունը փորձարկվել է Diageo PLC-ի 2019–2024 թթ. իրական ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Սա թույլ է տվել ապահովել հետազոտության գործնական նշանակությունը և ստուգել տեսական մոդելների կիրառելիությունը իրական հատվածի խոշոր ձեռնարկություններում:
- *Մարժինալ վերլուծության մեթոդ [11, էջ 816]:* Օգտագործվել է շահութաբերության տարբեր մակարդակների (Gross, EBIT, EBITDA, Pre-Tax, Net) տատանողականությունը առանձնացնելու համար: Սա հնարավորություն է տվել բացահայտելու, թե գործառնական ցիկլի որ փուլում է ձևավորվում հիմնական ֆինանսական ռիսկը:

### Վերլուծություն և ստացված արդյունքներ

**Մարժինալ ռիսկի գործակիցների (Cr) գնահատում:** 2019–2024 թթ. ժամանակահատվածի համար հաշվարկված ինտերվալային ցուցանիշները ցույց են տալիս, որ Diageo-ն ունի ֆինանսական կայունության բարձր աստիճան:

### Աղյուսակ 1.

Մարժինալ ռիսկի գործակիցների Cr համեմատական վերլուծությունը՝ Diageo PLC ընկերության և ավտոմոբիլային ոլորտի օրինակով (2019–2024 թթ.) [5]

Ցուցանիշ	Diageo (Cr)	Մեկնաբանություն
Gross Margin (X1)	0.045	Diageo-ի ռիսկը 2.7 անգամ ցածր է
EBIT Margin (X2)	0.082	Կայուն գործառնական շահույթ
EBITDA Margin (X3)	0.061	Հուսալի դրամական հոսքեր
Pre-tax Margin (X4)	0.094	Ցածր զգայունություն CFR-ի նկատմամբ
Net Margin (X5)	0.112	Վերջնական շահույթի կանխատեսելիություն

Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմնված Diageo PLC տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել էական տարբերություններ խմբի արտադրության

ուլորտի ռիսկայնության աստիճանների միջև: Քանակական ինտերվալային մեթոդի կիրառմամբ ստացված արդյունքները փաստում են հետևյալը.

Արտադրական կայունություն (X1): Diageo-ի համախառն շահույթի մարժայի ռիսկի գործակիցը ( $Cr=0.045$ ): Սա վկայում է այն մասին, որ խմիչքների արտադրության ոլորտում հումքի գների տատանումները և արտադրական ծախսերը շատ ավելի կանխատեսելի են և նվազ զգայուն շուկայական ցնցումների նկատմամբ:

Գործառնական արդյունավետություն (X2, X3): EBIT և EBITDA մարժաների ցածր տատանողականությունը Diageo-ի մոտ փաստում է կայուն դրամական հոսքերի գեներացման մասին: Գործառնական շահույթի ռիսկը կազմում է 0.082, ինչը թույլ է տալիս ընկերությանը պահպանել բարձր վարկունակություն նույնիսկ տնտեսական անկումների փուլում:

Ֆինանսավորման ազդեցությունը (X4): Նախահարկային շահույթի մարժայի ցուցանիշը (0.094) ցույց է տալիս, որ Diageo-ի կապիտալի կառուցվածքը և փոխառու միջոցների սպասարկումը (CFR) չեն առաջացնում կրիտիկական ռիսկեր:

Կանխատեսելիություն (X5): Վերջնական շահույթի զգալիորեն ավելի նեղ ինտերվալը ( $Cr=0.112$ ) Diageo-ի ցածր WACC-ի հիմնական դրայվերն է, քանի որ ներդրողների համար կանխատեսելի շահույթը նվազեցնում է անորոշության պրեմիան:

Անփոփելիվ՝ քանակական ախտորոշումը հիմնավորում է, որ խմիչքների արտադրության ոլորտի համար ինտերվալային ռիսկերը նվազագույնն են, ինչը ստեղծում է հուսալի հիմքեր ֆինանսական վարկանիշավորման և կապիտալի արժեքի օպտիմալացման համար:

**Ռեգրեսիոն մոդելի ախտորոշում:** Կառուցված բազմագործոն ռեգրեսիոն մոդելը բացահայտել է WACC-ի (Y) կախվածությունը մարժինալ ռիսկերից: Diageo-ի համար ստացված հավասարումն ունի հետևյալ տեսքը.

$$Y(WACC) = 0.742 + 0.042X1 - 0.185X2 + 0.315X3 - 0.512X4 + 0.385X5$$

**Դետերմինացիայի գործակից ( $R^2 = 0.814$ ):** Մոդելը 81.4%-ով բացատրում է կապիտալի արժեքի փոփոխությունը, ինչը վկայում է բարձր ճշգրտության մասին:

**Ազդեցության ուղղությունները:** Նախահարկային շահույթի կայունությունը (X4) ամենաուժեղ բացասական կորելյացիան ունի WACC-ի հետ: Այս ոլորտում ռիսկի նվազեցումը ամենաարագն է հանգեցնում կապիտալի էժանացմանը:

**Ռիսկերի վարկանիշավորման մատրիցա:** Հիմնվելով ստացված տվյալների վրա՝ կառուցվել է ռիսկերի ազդեցության մատրիցա, որը Diageo-ին դասում է «Ցածր ռիսկային/Կայուն» գոտում:

Արդյունքները փաստում են, որ քանակական ինտերվալային մեթոդը թույլ է տալիս ճշգրիտ տարբերակել իրական հատվածի կայունությունը: Diageo-ի դեպքում հիմնական գործոնը մնում է X4 և X5 գործակիցների կառավարումը, ինչը կապված է բրենդի հզորության և հաստատուն վաճառքների հետ:

**Հիմնական նորույթ.** Ստացված արդյունքները հաստատում են, որ մարժինալ ռիսկերի ինտերվալային գնահատումը հնարավորություն է տալիս կանխատեսել կապիտալի արժեքի փոփոխությունները նվազագույն սխալանքով ( $p < 0.05$ ): Հետազոտության ստացված արդյունքները արտացոլում

են քանակական ինտերվալային մեթոդի արդյունավետությունը իրական հատվածի ձեռնարկությունների ֆինանսական ախտորոշման գործում:

### **Եզրակացություն**

Հետազոտության արդյունքում իրականացված միջգիտակարգային վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ հիմնարար եզրահանգումները.

**Մեթոդաբանական նորարարություն:** Քանակական ինտերվալային մեթոդի կիրառումը հնարավորություն տվեց հաղթահարել ավանդական վարկանիշավորման համակարգերի սահմանափակումները: Ռիսկի գործակիցների (Cr) միջոցով ձևավորված «ինտերվալային միջանցքները» առավել օբյեկտիվ գործիք են կորպորատիվ կայունության ախտորոշման համար, հատկապես բարձր տատանողականություն ունեցող շուկաներում:

**Ոլորտային առանձնահատկություններ:** Diageo PLC-ի վերլուծությունը ցույց տվեց, որ իրական հատվածի կայուն ընկերություններում մարժինալ ռիսկերը զգալիորեն ավելի կանխատեսելի են: Diageo-ի ցածր ռիսկի գործակիցները ( $Cr < 0.1$ ) վկայում են ապրանքանիշի կապիտալացման և սպառողական հավատարմության՝ որպես ֆինանսական ռիսկերի զսպման մեխանիզմի արդյունավետության մասին:

**WACC-ի օպտիմալացում:** Ռեգրեսիոն մոդելավորումը հաստատեց, որ կապիտալի միջին կշռված արժեքը (WACC) ուղղակիորեն կախված է նախահարկային շահույթի (X4) և գործառնական շահութաբերության (X2) կայունությունից:  $R^2 = 0.814$  ցուցանիշը փաստում է մոդելի բարձր հուսալիությունը ֆինանսական պլանավորման գործընթացում:

**Գործնական առաջարկություններ:** Առաջարկվող քանակական վարկանիշավորման մոդելը կարող է ներդրվել ՀՀ ֆինանսական կազմակերպությունների և խոշոր արտահանողների կողմից՝ ներդրումային գրավչությունը գնահատելիս և կորպորատիվ ֆինանսավորման գործակիցը (CFR) օպտիմալացնելիս:

Ամփոփելով՝ քանակական ինտերվալային մեթոդների և միջգիտակարգային մոտեցման համադրումը ստեղծում է նոր գիտական հենք ռիսկերի կառավարման համար, որը թույլ է տալիս ճշգրիտ տարբերակել կայուն աճը սպեկուլյատիվ տատանումներից՝ ապահովելով ձեռնարկությունների երկարաժամկետ վճարունակությունը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Albuquerque R., Koskinen Y., Yang S., & Zhang C., Resiliency of Environmental and Social Stocks: An Analysis of the Exogenous COVID-19 Market Crash, Review of Corporate Finance Studies, 8(1), 2019, pp. 93–121.
2. Berk J., & DeMarzo P., Corporate Finance (5th ed.), Harlow, UK, Pearson Education, 2020, 1152 p.
3. Damodaran A., Equity Risk Premiums (ERP): Determinants, Estimation and Implications – The 2024 Edition, New York, New York University Stern School of Business, 2024 / URL: <https://pages.stern.nyu.edu/~adamodar/09.03.2026>.
4. Diageo PLC., Annual Reports and Accounts 2020–2024, London, Diageo PLC, 2024 / URL: <https://www.diageo.com>, 09.03.2026.
5. Diageo PLC., Annual Report and Accounts 2024, London, Diageo PLC, 2024 / URL: <https://www.diageo.com/en/investors/results-reports-and-presentations>, 09.03.2026.

6. Grigoryan A., The ratio of debt, its components and sales revenue of Diageo, *Katchar Scientific Periodical*, (2), 2024, pp. 122–133 // URL: <https://arar.sci.am/Content/377812/122.pdf>, 09.03.2026.
7. Gyulasaryan M. R., Matevosyan A. V., Grigoryan A. Z., & Matevosyan M. H., AI-driven capital structure forecasting for automotive giants: Enhancing stability, liquidity, and solvency, *Journal of Asian Scientific Research*, 15(4), 2025, pp. 735–744 // URL: <https://doi.org/10.55493/5003.v15i4.5741>, 09.03.2026.
8. Gyulasaryan M. R., Matevosyan A. V., Grigoryan A. Z., & Matevosyan M. H., Financial risk rating in the automotive industry: A quantitative interval-based approach, *Asian Economic and Financial Review*, 15(10), 2025, pp. 1632–1645 // URL: <https://doi.org/10.55493/5002.v15i10.5655>, 09.03.2026.
9. Gyulasaryan M. R., Matevosyan A. V., Grigoryan A. Z., & Matevosyan M. H., Cash-flow-based solvency assessment in technology service companies with SaaS revenue models: A case study of ServiceNow, *Proceedings on Engineering Sciences*, 7(3), 2025, pp. 1713–1720 // URL: <https://doi.org/10.24874/PES07.03.029>, 09.03.2026.
10. Horngren C. T., Datar S. M., & Rajan M. V., *Cost Accounting: A Managerial Emphasis* (17th ed.), Harlow, UK, Pearson Education, 2021, 1024 p.
11. Jorion P., *Financial Risk Manager Handbook* (6th ed.), Hoboken, NJ, John Wiley & Sons, 2011, 816 p.
12. Malkiel B. G., *A Random Walk Down Wall Street: The Time-Tested Strategy for Successful Investing*, New York, NY, W. W. Norton & Company, 2023, 480 p.
13. Matevosyan A. V., Israyelyan S., Matevosyan M., Grigoryan Z., & Hovakanyan L., The proposed approach for assessing the impact of CFR on WACC in alcoholic beverage manufacturing companies, *Messenger of ASUE*, 1(79), 2025, pp. 115–128 // URL: [https://doi.org/10.52174/1829-0280\\_2025.1-115](https://doi.org/10.52174/1829-0280_2025.1-115), 09.03.2026.
14. Matevosyan A. V., Mikayelyan V. K., Grigoryan H. H., Matevosyan M. H., & Grigoryan A. Z., The impact of the corporate financing ratio on the weighted average cost of capital: Evidence from automobile manufacturing companies, In S. S. Shaumarov (Ed.), *Smart Transport Systems and the Digital Economy Infrastructure*, Cham, Springer, 2026 // URL: [https://doi.org/10.1007/978-3-032-12181-3\\_4](https://doi.org/10.1007/978-3-032-12181-3_4), 09.03.2026.
15. Rahman M. F., The Impact of WACC on Corporate Profitability: A Panel Data Analysis, *Journal of Risk and Financial Management*, 14(9), 2021, p. 412.
16. Ross S. A., Westerfield R. W., & Jaffe J., *Corporate Finance* (13th ed.), New York, NY, McGraw-Hill Education, 2022, 1056 p.